ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ
МЭРИЯ г. АЛАВЕРДИ
REPUBLIC OF ARMENIA REGION OF LORI
MUNICIPALITY OF ALAVERDI

1702, Ալավերդի, Զ. Անդրանիկի 8Ա
1702, Алаверди, З. Андраника 8А
1702, Alaverdi, Z. Andraniki 8A
☎ (253) 2-41-00
Fax (253) 2-41-00
E-mail: alaverdi@alaverdi.am
URL: www.alaverdi.am

№ 500
«22» 05 2012թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ է ուղարկվում Ալավերդու քաղաքապետի 2012թ. N 109-Ա, N 110-Ա, N 111-Ա, N 112-Ա որոշումները:

Առդիր՝ 6 էջ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

Կատ.՝ Ա. Էվոյան
2-41-02

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի 8 Ա
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi@alaverdi.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«17» մայիսի 2012 թվականի N 112-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 7-րդ, 9-րդ, 10-րդ հոդվածների պահանջներով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 20-ի N 21-Ա հրամանում փոփոխություն և լրացում կատարելու մասին» N 59-Ա հրամանը

**Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝**

1. Հաստատել Ալավերդու քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջին կարգի մասնագետի համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը (հավելված 1):
2. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդու քաղաքապետի 2012 թվականի մարտի 28-ի «Ալավերդու քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 79-Ա որոշման հավելված N 25-ը:

Ա.Վ. ՎԱՐՈՍՅԱՆ

2012թ. մայիսի 17
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի 8 Ա
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi@alaverdi.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» մայիսի 2012 թվականի N 111-Ա

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2012թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝**

Ալավերդի համայնքի 2012թ. բյուջեի եկամուտների ու ծախսերի եռամսյակային բաշխման մեջ կատարել փոփոխություն.

բյուջեի եկամտային մասում՝ 3-րդ եռամսյակում նախատեսված համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների գույքահարկի եկամուտներից (h/h 900265121039) 150.0 հազ. դրամ տեղափոխել 2-րդ եռամսյակ.

բյուջեի ծախսային մասում՝ օրենսդիր և գործադիր մարմինների արտասահմանյան գործուղումների համար 3-րդ եռամսյակում նախատեսված ծախսերից 150.0 հազ. դրամ տեղափոխել 2-ին եռամսյակ (բաժին 01, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, h/h 900262161038, հոդված 4222):

Ա.Ս. ՎԱՐՈՍՅԱՆ

2012թ. մայիսի 17
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի 8 Ա
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi@alaverdi.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» մայիսի 2012 թվականի N 110-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ՆԿՈՒՂԻ ԵՎ ՀԱՎԱՆՈՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ մասերով, 5-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. № 731-Ն որոշումով, 18.05.2006թ. № 912-Ն որոշման 33-րդ կետով, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված ավտոտնակը, նկուղը և հավանոցը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ և պահպանում են քաղաքաշինական նորմերը

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամաս թիվ 1/24 շենքի հարևանությամբ ինքնակամ կառուցված 18.1 քմ ներքին մակերեսով ավտոտնակի, 11.5 քմ ներքին մակերեսով նկուղի և 6.7 քմ ներքին մակերեսով հավանոցի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամաս թիվ 1/24 շենքի հարևանությամբ 1993թ. ինքնակամ կառուցված, համայնքային սեփականություն ճանաչված 18.1 քմ ներքին մակերեսով ավտոտնակը, 11.5 քմ ներքին մակերեսով նկուղը և 6.7 քմ ներքին մակերեսով հավանոցը, սպասարկման համար զբաղեցրած 45.3 քմ հողամասով:
3. Սանահին Սարահարթ թաղամասի թիվ 1/24 շենքի հարևանությամբ գտնվող՝ Նելսոն Վարոսյանի կողմից տիրապետվող ավտոտնակին, նկուղին, հավանոցին տրամադրել Սանահին Սարահարթ թաղամաս թիվ 1/24 -10 Ա փոստային հասցե:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի 8 Ա
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi@alaverdi.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 14 » մայիսի 2012 թվականի N 109-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 38-րդ հոդվածներով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ մասերով, 5-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. № 731-Ն որոշումով, 18.05.2006թ. № 912-Ն որոշման 33-րդ կետով, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ և պահպանում է քաղաքաշինական նորմերը

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ալավերդի քաղաքի Սանահին կայարան թաղամաս թիվ 42 շենքի արևմտյան մասում կառուցված 17.9 քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Սանահին կայարան թաղամաս թիվ 42 շենքի արևմտյան մասում գտնվող 1985թ. 17.9 քմ արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված, համայնքային սեփականություն ճանաչված ավտոտնակը, սպասարկման համար զբաղեցրած 17.9 քմ հողամասով:
3. Սանահին կայարան թաղամասի թիվ 42 շենքի արևմտյան մասում գտնվող՝ Սուրեն Պողոսյանի կողմից տիրապետվող ավտոտնակին տրամադրել Սանահին կայարան թաղամաս թիվ 42/3 Ա փոստային հասցե:
4. Ավտոտնակի զբաղեցրած 17.9 քմ հողամասը ընդրկված չէ ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում: